«Տնտեսական ազատության ինդեքս- 2012» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների

«Հերիթիջ» հիմնադրամը, «Ուոլ Սթրիթ» օրաթերթի հետ համատեղ, տարբեր պաշտոնական աղբյուրների տվյալների հիման վրա գնահատել և 2012թ. հունվարի 12-ին հրապարակել է 184 երկրների համար 2012 թ.-ի տնտեսական ազատության ինդեքսները: Այդ ինդեքսի գնահատման սկզբունքները և մեթոդիկան հետևյալն է՝ նախ, կիրառվում է 0-ից մինչև 100 տոկոս գնահատման համակարգ, ընդ որում՝ բարձր գնահատականը վկայում է տնտեսական ազատության ավելի մեծ աստիճանի մասին: Երկրորդ, տնտեսական ազատության ինդեքսը գնահատելիս օգտագործվում են 50 անկախ տնտեսական գործոններ, որոնք ներառվում և գնահատվում են 10 խոշոր գործոնների մեջ: Այդ խոշոր գործոններն են՝ **գործարարության ազատությունը, առևտրի ազատությունը, հարկաբյուջետային ազատությունը, կառավարության ծախսերը, դրամավարկային ազատությունը, ներդրումների ազատությունը, ֆինանսական ազատությունը, սեփականության իրավունքը, կոռուպցիայից ազատությունը և աշխատանքի ազատությունը:**

Բացի այդ, «Հերիթիջ» հիմնադրամը դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգում է ըստ հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես, 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես **«ազատ»**, 70.0-79.9%՝ **«հիմնականում ազատ»**, 60.0-69.9%՝ **«չափավոր ազատ»**, 50.0-59.9%՝ **«հիմնականում ոչ ազատ»**, 49.9%-ից ցածր՝ **«ճնշված»** երկրներ:

2012 թ. տնտեսական ազատության ինդեքսի գնահատման համար «Հերիթիջ» հիմնադրամի փորձագետները հիմք են ընդունել 2010թ. հուլիսի 1-ից մինչև 2011թ. հունիսի 30-ը ընկած ժամանակաշրջանի տնտեսական ցուցանիշները: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ որոշ գործոններ գնահատվել են պատմական տեղեկատվության հիման վրա: Այսպես, օրինակ, 2012թ. **դրամավարկային ազատություն** գործոնի գնահատման համար հիմք է ընդունվել 2008-2010 թթ. միջին կշռված տարեկան գնաճը, մինչդեռ, որպես հարկավորման ցուցանիշ վերցվել են 2011 թ. հարկային տարվա հարկային դրույքները:

Հայաստանի գնահատականները. Համաձայն «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների, Հայաստանը 2012թ.-ին գնահատվել է որպես ազատականացված բիզնես միջավայր ունեցող երկիր: Թեև «Տնտեսական ազատության ինդեքս 2012» հետազոտությունում Հայաստանի դիրքը վատացել է և աշխարհի 184 երկրների շարքում Հայաստանը ներկայումս գրավում է 39-րդ տեղը՝ նախորդ տարվա 36-րդ տեղի փոխարեն, այնուամենայնիվ առանձին խոշոր գործոններով գրանցվել է զգալի առաջընթաց:

Հայաստանի 2012թ.-ի տնտեսական ազատության ընդհանրական գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 0.9 միավորով, քանի որ փոփոխություններ են կատարվել դրա հիմքը հանդիսացող առանձին գործոններում (տես աղյուսակ. 3): Այսպես, 2011թ.-ի համեմատ <u>բարելավվել են</u> **գործարարության ազատության** (5.4 միավորով), **աշխատանքի ազատության** (0.7 միավորով) և **հարկաբյուջետային ազատության** (0.1 միավորով) գնահատականները, <u>անփոփոխ են մնացել</u> **ներդրումների**

ազատության, **ֆինանսական ազատության** և **սեփականության իրավունքի պաշտպանության** գնահատականները, վատացել են **կառավարության ծախսերի** (10.8 միավորով) **դրամավարկային ազատության** (2.9 միավորով), **կոռուպցիայից ազատության** (1.0 միավորով) և **առևտրի ազատության** (0.1 միավորով) գնահատականները: Մասնավորապես,

- **«Կառավարության ծախսեր»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ իջել է 10.5 միավորով և կազմել 74.9 միավոր: Այս գործոնը դիտարկում է կառավարության ծախսերի, ներառյալ սպառումն ու տրանսֆերտները, տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Հետևաբար, այս գործոնի գնահատականի վատացումը պայմանավորվել է այն հանգամանքով, որ նախորդ տարվա համեմատ Հայաստանի Կառավարության ծախսերը ՀՆԱ-ում աճել են 7.1%-ով և 2011 թ. կազմել 28.9%՝ հանգեցնելով ՀՆԱ-ում պետբյուջեի 5% պակասուրդի և բարձր՝ շուրջ 40% պետական պարտքի մակարդակի:
- **«Դրամավարկային ազատություն»** գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է 2.9 միավորով և կազմել 73.1 միավոր: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, դրա հիմքում ընկած է այն փաստը, որ երկրի «կառավարությունը սուբսիդավորում է խեղաթյուրված գները տրանսպորտի, էլեկտրաէներգիայի և գազի հատվածներում»[1]:
- **«Կոռուպցիայից ազատություն»** գործոնի գնահատականի հիմքում դրվել է «Թրանսփերենսի ինթերնեյշնլի» «Կոռուպցիայի ըն-

[1] *Աղբյուրը՝* ***Promoting Economic Opportunity & Prosperity: The 2012 Index of Economic Freedom****/Heritage Foundation & The Wall Street Journal, էջ 90:*

կալման» 2010թ. ինդեքսը, որով Հայաստանը աշխարհի 183 երկրների թվում գրավում էր 129-133-րդ տեղը: Ըստ «Հերիթիջի» փորձագետների, Հայաստանում «երկրի հակակոռուպցիոն միջոցառումները դեռևս արդյունավետորեն չեն իրագործվում»[2]:

- **«Առևտրի ազատություն» գործոնի գնահատականը նախորդ տարվա համեմատ վատացել է** 0.1 միավորով և կազմել 85.4 միավոր: Ըստ «Հերթիջի» փորձագետների, «առևտրի միջին կշռված տարիֆը կազմում է 2.3% և անարդյունավետ վարչարարությունը մեծացնում է առևտրի ծախքերը»[3]:

Չնայած վերոնշյալ վատացումներին, «Հերիթիջի» փորձագետները բարձր են գնահատել անցած տասնամյակում Հայաստանում իրականացված շուկայական ազատականացումը և տնտեսական վերակառուցումը: Վերջին համաշխարհային տնտեսական անկման ժամանակ Հայաստանի տնտեսությունը ցուցաբերել է չափավոր ճկունություն: Կանոնակարգման ընդհանուր դաշտը մնում է արդյունավետ, դյուրինացված գործարարության լավ կազմակերպված գործընթացներով և մրցունակ հարկային դրույքներով: Ազատ շուկային աջակցող քաղաքականությունները ամուր են և նպաստում են երկրի ներդրումային և առևտրի ռեժիմների մրցունակությանը: «Հերիթիջի» փորձագետների կարծիքով, «թեև Հայաստանը տնտեսական ազատության չորս հենասյուների գծով ունի համեմատական առաջընթաց, այնուամենայնիվ տնտեսական ազատության հիմքերը դեռևս ամրապնդված չեն ուժեղ և անկախ դատական համակարգով: Դեռևս պահպանվող կոռուպցիան

---

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

խարխլում է առավել ուժեղ և երկարատև տնտեսական զարգացման հնարավորությունները: Կառավարության ծախսերը ընդլայնողական են եղել վերջին տարիներին, վերացնելով կառավարության սահմանափակումները»[4]:

Հայաստանի տնտեսական ազատության մակարդակը, 2000թ-ից սկսած, հիմնականում եղել է 60.0-69.9% միջակայքում (բացառությամբ 2004 և 2006թթ., երբ գնահատականները բարձր են եղել 70%-ից), այսինքն, ըստ «Հերիթիջի» դասակարգման, Հայաստանը վերջին 10 տարիների ընթացքում համարվել է տնտեսապես «չափավոր ազատ» երկիր, թեև հարկ է նշել, որ այդ տարիների ընթացքում Հայաստանի գնահատականը գրեթե միշտ մոտ է եղել միջակայքի առավելագույն սահմանին (տե՛ս աղյուսակ 3):

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. Հայաստանը տնտեսական ազատության մակարդակով Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ երկրներից զիջում է Էստոնիային, Լիտվային, Չեխիային և Վրաստանին (տե՛ս աղյուսակ 1):

«Տնտեսական ազատության 2012 թ. ինդեքսի» հիմքում ընկած 10 գործոններից 7-ով Հայաստանը գերազանցում է աշխարհի 184 երկրների միջին ցուցանիշը: Ինչպես և նախորդ տարի, Հայաստանը զիջում է աշխարհի 2012թ. միջին ցուցանիշին միայն «Սեփականության իրավունքի պաշտպանության», «Կոռուպցիայից ազատության» և «Դրամավարկային քաղաքականության» գնահատականներով:

Տնտեսական ազատության ինդեքսով Հայաստանից զգալիորեն հետ է մնում Մերձբալթյան երկրներից Լատվիան, որը զբաղեցնում է 56-րդ

[4] *Նույն տեղում, էջ 89:*

տեղը: ԱՊՀ երկրներից հաջորդը Ղազախստանն է, որը ներկայումս զբաղեցնում է 65-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 1):

Եվրոպական տարածաշրջանի 43 երկրների շարքում Հայաստանի դիրքը 2012թ. չի փոխվել և գրավել է 19-րդ տեղը, իսկ Վրաստանը զբաղեցնում է 16-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 2): Հայաստանի տնտեսական ազատության գնահատականը (68.8 միավոր) բարձր է նաև եվրոպական տարածաշրջանի միջինից (66.1 միավոր):

Հայաստանի հետ մեկտեղ, տնտեսապես «**չափավոր ազատ**» երկրների շարքն են դասվում նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, բացառությամբ Սերբիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, որոնք ներկայումս դասվում են «հիմնականում ոչ ազատ» երկրների թվին: Տնտեսապես «**չափավոր ազատ**» երկրների թվին են դասվում նաև նախկին ԽՍՀՄ երկրներից՝ Լատվիան, Վրաստանը, Ղազախստանը և Ղրղզստանը (տե՛ս աղյուսակ 1): Նկատենք, որ, համաձայն Հերիթիջի գնահատականների, Ադրբեջանը, Սերբիան, Բոսնիա-Հերցոգովինան, Մոլդովան, Տաջիկստանն ու Ռուսաստանը համարվում են «**հիմնականում ոչ ազատ**», իսկ Բելառուսը, Ուկրաինան, Ուզբեկստանը և Թուրքմենստանը՝ «**ճնշված**» երկրներ:

Կից աղյուսակների տեսքով ներկայացվում են նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, եվրոպական տարածաշրջանի երկրների 2012 թ. տնտեսական ազատության ինդեքսների համեմատական գնահատականները, ինչպես նաև Հայաստանի 1996-2012թթ. և հարավկովկասյան երկրների 2008–2012թթ. ինդեքսները՝ ըստ «Հերիթիջ» հիմնադրամի:

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների[5] (2012 թվական)

Աղյուսակ 1

Երկրի դիրքը աշխարհի 184 երկրների շարքում	Երկիր	Գնահատականներ							2012 թ. գնահատականն ըստ առանձին գործոնների									
		2012	11	10	09	08	07	06	Ընդհանուր գնահատական	Սեփականության իրավունքներ	Կոռուպցիայի մակարդակ	Աշխատանքի ազատություն	Առևտրի ազատություն	Դրամավարկային քաղաքականություն	Պետական ծախսեր	Հարկային քաղաքականություն	Պետական սեփականություն	Ներդրումային ազատություն	Ֆինանսական ազատություն
16	Էստոնիա	**73.2**	**75.2**	74.7	76.4	77.9	78.0	74.9	75.7	87.1	79.1	38.8	79.3	90.0	80.0	80.0	65.0	56.9
23	Լիտվա	**71.5**	**71.3**	70.3	70.0	70.9	71.5	71.8	79.2	87.1	93.6	41.7	79.3	80.0	80.0	60.0	50.0	64.6
30	Չեխիա	**69.9**	**70.4**	69.8	69.4	68.1	67.4	66.4	67.7	87.1	82.0	36.8	81.5	70.0	80.0	70.0	46.0	77.9
34	Վրաստան	**69.4**	**70.4**	70.4	69.8	69.2	69.3	64.5	86.9	89.2	87.8	55.8	74.4	70.0	60.0	40.0	38.0	92.1
39	Հայաստան	**68.8**	**69.7**	69.2	69.9	69.9	68.6	70.6	87.8	85.4	89.3	74.9	73.1	75.0	70.0	30.0	26.0	76.6
43	Մակեդոնիա	**68.5**	**66.0**	65.7	61.2	61.1	60.6	59.2	80.9	83.6	91.2	66.7	86.1	60.0	60.0	35.0	41.0	80.3
49	Հունգարիա	**67.1**	**66.6**	66.1	66.8	67.6	64.8	65	79.8	87.1	78.6	24.4	76.1	70.0	70.0	70.0	47.0	67.6
51	Սլովակիա	**67.0**	**69.5**	69.7	69.4	70.0	69.6	69.8	71.0	87.1	84.2	48.2	83.5	75.0	70.0	50.0	43.0	58.1
56	Լատվիա	**65.2**	**65.8**	66.2	66.6	68.3	67.9	66.9	75.9	87.1	84.3	43.8	79.1	80.0	50.0	50.0	43.0	59.1

[5] *Աղյուսակում ներկայացված են 2006-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսների»՝ «Հերիթիջ» հիմնադրամի կողմից վերահաշվարկված գնահատականները: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:*

57	Ալբանիա	**65.1**	**64.0**	66.0	63.7	62.4	61.4	60.3	78.2	79.8	91.4	69.5	78.6	65.0	70.0	35.0	33.0	51.0
61	Բուլղարիա	**64.7**	**64.9**	62.3	64.6	63.7	62.7	64.1	72.7	87.1	93.6	50.3	77.8	55.0	60.0	30.0	36.0	84.2
62	Ռումինիա	**64.4**	**64.7**	64.2	63.2	61.7	61.2	58.2	70.5	87.1	87.4	55.1	74.3	80.0	50.0	40.0	37.0	62.6
64	Լեհաստան	**64.2**	**64.1**	63.2	60.3	60.3	58.1	59.3	61.4	87.1	74.4	40.3	79.1	65.0	60.0	60.0	53.0	61.3
65	Ղազախստան	**63.6**	**62.1**	61.0	60.1	61.1	59.6	60.2	72.9	79.6	90.4	83.4	71.8	30.0	50.0	40.0	29.0	88.7
69	Սլովենիա	**62.9**	**64.6**	64.7	62.9	60.2	59.6	61.9	81.4	87.1	64.8	27.9	81.2	70.0	50.0	60.0	64.0	42.2
72	Մոնտենեգրո	**62.5**	**62.5**	63.6	58.2	_	_	_	69.2	83.6	91.3	31.7	81.2	55.0	50.0	40.0	37.0	86.1
83	Խորվաթիա	**60.9**	**61.1**	59.2	55.1	54.1	53.4	53.6	63.4	87.5	76.4	45.0	81.4	70.0	60.0	40.0	41.0	44.4
88	Ղրղզստան	**60.2**	**61.1**	61.3	61.8	61.1	60.2	61.0	74.1	63.2	93.1	66.5	71.0	55.0	50.0	20.0	20.0	88.9
91	Ադրբեջան	**58.9**	**59.7**	58.8	58.0	55.3	54.6	53.2	68.6	77.2	84.9	63.7	74.5	55.0	40.0	20.0	24.0	81.6
98	Սերբիա	**58.0**	**58.0**	56.9	56.6	_	_	_	56.5	77.9	84.1	39.3	68.0	60.0	50.0	40.0	35.0	68.7
104	Բոսնիա և Հերց.	**57.3**	**57.5**	56.2	53.1	53.9	54.4	55.6	55.2	86.0	84.3	24.4	80.7	70.0	60.0	20.0	32.0	60.4
124	Մոլդովա	**54.4**	**55.7**	53.7	54.9	57.9	58.7	58.0	70.0	79.0	86.5	38.7	74.4	35.0	50.0	40.0	29.0	41.7
129	Տաջիկստան	**53.4**	**53.5**	53.0	54.6	54.4	53.6	52.6	61.6	82.5	89.0	75.5	67.4	20.0	40.0	20.0	21.0	56.8
144	Ռուսաստան	**50.5**	**50.5**	50.3	50.8	49.8	52.2	52.4	65.1	68.2	82.5	48.6	66.3	25.0	40.0	25.0	21.0	63.5
153	Բելառուս	**49.0**	**47.9**	48.7	45.0	45.3	47.0	47.5	71.3	80.4	86.6	34.9	65.3	20.0	10.0	20.0	25.0	77.0
163	Ուկրաինա	**46.1**	**45.8**	46.4	48.8	51.0	51.5	54.4	46.2	84.4	78.2	29.4	67.7	20.0	30.0	30.0	24.0	51.2
164	Ուզբեկստան	**45.8**	**45.8**	47.5	50.5	51.9	51.5	48.7	67.6	66.1	94.4	64.9	64.2	0.0	10.0	15.0	16.0	60.1
168	Թուրքմենստ.	**43.8**	**43.6**	42.5	44.2	43.4	43.0	43.8	30.0	79.2	98.4	93.5	71.0	0.0	10.0	10.0	16.0	30.0
	Համաշխարհային միջին	**59.5**	**59.7**	**64.30**	**74.83**	**76.30**	**63.87**	**73.43**	**64.7**	**74.5**	**76.9**	**59.8**	**74.4**	**50.7**	**48.6**	**43.4**	**76.9**	**61.4**

Եվրոպական տարածաշրջանի երկրների տնտեսական ազատության գնահատականները ըստ «Հերիթիջ» հիմնադրամի (2012 թվական)

Աղյուսակ 2

Երկրի դիրքը աշխարհի 184 երկրների շարքում	Դիրքը տարածաշրջանի 43 երկրների շարքում	Երկիրը	2012 թ. գնահատականը	Փոփոխությունը 2011 թ. համեմատությամբ	2012 թ. գնահատականն ըստ գործոնների									
					Սեփականության իրավունքի պաշտպանվածություն	Կոռուպցիայի մակարդակ	Պետական ծախսեր	Հարկային քաղաքականություն	Ձեռնարկատիրական գործունեության ազատություն	Աշխատանքային շուկայի կարգավորվածություն	Առևտրի ազատություն	Ֆինանսական ծառայությունների կարգավորվածություն	Դրամավարկային քաղաքականություն	Միջազգային առևտրի ազատություն
5	1	Շվեյցարիա	**81.1**	-0.8	77.9	90.0	67.9	65.8	84.4	80.0	80.0	90.0	87.0	87.9
9	2	Իռլանդիա	**76.9**	-1.8	92.8	87.1	73.9	30.4	76.7	90.0	70.0	90.0	80.0	78.4
11	3	Դանիա	**76.2**	-2.4	99.1	87.1	39.8	0.0	80.7	90.0	90.0	90.0	93.0	92.1
13	4	Լյուքսեմբուրգ	**74.5**	-1.7	75.9	87.1	63.6	46.6	81.3	95.0	80.0	90.0	85.0	40.9
14	5	Անգլիա	**74.1**	-0.4	94.7	87.1	56.4	21.5	73.9	90.0	80.0	90.0	76.0	71.5
15	6	Նիդեռլանդ.	**73.3**	-1.4	81.9	87.1	51.2	20.9	83.6	90.0	80.0	90.0	88.0	60.0
16	7	Էստոնիա	**73.2**	-2.0	75.7	87.1	79.1	38.8	79.3	90.0	80.0	80.0	65.0	56.9
17	8	Ֆինլանդիա	**72.3**	-1.7	94.9	87.1	65.4	5.2	81.3	85.0	80.0	90.0	92.0	42.4
20	9	Կիպրոս	**71.8**	-1.5	81.6	82.1	83.3	37.1	85.7	75.0	70.0	70.0	63.0	69.9
21	10	Շվեդիա	**71.7**	-0.2	94.6	87.1	39.1	8.8	80.9	90.0	80.0	90.0	92.0	54.6
23	11	Լիտվա	**71.5**	0.2	79.2	87.1	93.6	41.7	79.3	80.0	80.0	60.0	50.0	64.6
26	12	Գերմանիա	**71.0**	-0.8	90.5	87.1	61.3	32.2	83.5	85.0	60.0	90.0	79.0	41.4
27	13	Իսլանդիա	**70.9**	2.7	92.0	88.2	73.5	21.8	72.5	65.0	60.0	90.0	85.0	60.9
28	14	Ավստրիա	**70.3**	-1.6	70.3	87.2	50.5	15.4	82.2	80.0	70.0	90.0	79.0	78.1
30	15	Չեխիա	**69.9**	-0.5	67.7	87.1	82.0	36.8	81.5	70.0	80.0	70.0	46.0	77.9
34	16	Վրաստան	**69.4**	-1.0	86.9	89.2	87.8	55.8	74.4	70.0	60.0	40.0	38.0	92.1
36	17	Իսպանիա	**69.1**	-1.1	81.3	87.1	61.3	37.1	81.5	80.0	80.0	70.0	61.0	51.8
38	18	Բելգիա	**69.0**	-1.2	92.3	87.1	44.8	12.1	81.2	80.0	70.0	80.0	71.0	71.3
39	**19**	**Հայաստան**	**68.8**	-0.9	87.8	85.4	89.3	74.9	73.1	75.0	70.0	30.0	26.0	76.6
40	20	Նորվեգիա	**68.8**	-1.5	88.4	89.3	52.5	35.3	75.1	65.0	60.0	90.0	86.0	46.3
43	21	Մակեդոնիա	**68.5**	2.5	80.9	83.6	91.2	66.7	86.1	60.0	60.0	35.0	41.0	80.3
49	22	Հունգարիա	**67.1**	0.5	79.8	87.1	78.6	24.4	76.1	70.0	70.0	70.0	47.0	67.6
50	23	Մալթա	**67.0**	1.3	70.0	87.1	67.8	43.8	80.5	75.0	60.0	70.0	56.0	60.0
51	24	Սլովակիա	**67.0**	-2.5	71.0	87.1	84.2	48.2	83.5	75.0	70.0	50.0	43.0	58.1
56	25	Լատվիա	**65.2**	-0.6	75.9	87.1	84.3	43.8	79.1	80.0	50.0	50.0	43.0	59.1
57	26	Ալբանիա	**65.1**	1.1	78.2	79.8	91.4	69.5	78.6	65.0	70.0	35.0	33.0	51.0
61	27	Բուլղարիա	**64.7**	-0.2	72.7	87.1	93.6	50.3	77.8	55.0	60.0	30.0	36.0	84.2
62	28	Ռումինիա	**64.4**	-0.3	70.5	87.1	87.4	55.1	74.3	80.0	50.0	40.0	37.0	62.6
64	29	Լեհաստան	**64.2**	0.1	61.4	87.1	74.4	40.3	79.1	65.0	60.0	60.0	53.0	61.3
67	30	Ֆրանսիա	**63.2**	-1.4	83.7	82.1	53.8	5.3	82.3	55.0	70.0	80.0	68.0	51.6
68	31	Պորտուգալիա	**63.0**	-1.0	83.0	87.1	59.0	25.5	82.6	70.0	60.0	70.0	60.0	32.5
69	32	Սլովենիա	**62.9**	-1.7	81.4	87.1	64.8	27.9	81.2	70.0	50.0	60.0	64.0	42.2
70	33	Մոնտենեգրո	**62.5**	0.0	69.2	83.6	91.3	31.7	81.2	55.0	50.0	40.0	37.0	86.1
73	34	Թուրքիա	**62.5**	-1.7	67.1	85.4	77.7	58.5	71.9	70.0	60.0	50.0	44.0	40.0
83	35	Խորվաթիա	**60.9**	-0.2	63.4	87.5	76.4	45.0	81.4	70.0	60.0	40.0	41.0	44.4
92	36	Իտալիա	**58.8**	-1.5	77.4	87.1	55.0	19.4	82.0	75.0	60.0	50.0	39.0	43.0
98	37	Սերբիա	**58.0**	0.0	56.5	77.9	84.1	39.3	68.0	60.0	50.0	40.0	35.0	68.7
104	38	Բոսնիա և Հերցեգովինա	**57.3**	-0.2	55.2	86.0	84.3	24.4	80.7	70.0	60.0	20.0	32.0	60.4

119	39	Հունաստան	**55.4**	-4.9	76.3	82.1	65.3	16.2	72.6	60.0	60.0	50.0	35.0	36.6
124	40	Մոլդովա	**54.4**	-1.3	70.0	79.0	86.5	38.7	74.4	35.0	50.0	40.0	29.0	41.7
144	41	Ռուսաստան	**50.5**	0.0	65.1	68.2	82.5	48.6	66.3	25.0	40.0	25.0	21.0	63.5
153	42	Բելառուս	**49.0**	1.1	71.3	80.4	86.6	34.9	65.3	20.0	10.0	20.0	25.0	77.0
164	43	Ուկրաինա	**46.1**	0.3	46.2	84.4	78.2	29.4	67.7	20.0	30.0	30.0	24.0	51.2
		Տարածաշրջային միջին	**66.1**	---	**77.5**	**85.5**	**72.4**	**35.5**	**78.3**	**69.9**	**63.7**	**61.3**	**55.5**	**61.4**

Հայաստանի «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների (1996-2012 թվականներ) [6]

Աղյուսակ 3

		2012	2011	2010	2009	2008	2007	2006	2005	2004	2003	2002	2001	2000	1999	1998	1997	1996
Երկրների թիվը		**184**	**183**	**183**	**179**	**157**	**157**	**157**	**155**	**155**	**157**	**157**	**155**	**161**	**161**	**156**	**150**	**142**
Երկրի դիրքը		**39**	**36**	**38**	**31**	**30**	**34**	**27**	**25**	**23**	**37**	**32**	**46**	**62**	**97**	**117**	**123**	**125**
	ԳՈՐԾՈՆՆԵՐԸ																	
1.	Գործարարության ազատությունը	87.8	82.4	83.4	83.7	81.3	80.8	77.6	55	55	55	55	55	55	55	55	55	55
2.	Առևտրի ազատությունը	85.4	85.5	80.5	86.4	85.0	85.6	80.6	80.0	80.0	81.2	81.4	77.0	77.0	75.0	75.0	83.0	69.0
3.	Հարկաբյուջետային ազատությունը	89.3	89.2	89.3	90.0	89.0	89.7	90.0	89.9	90.0	88.9	88.3	81.9	79.3	80.3	80.9	80.7	75.8
4.	Կառավարության չափը	74.9	85.7	90.9	89.7	86.4	90.8	90.7	88.9	88.7	84.1	81.3	85.5	86.8	82.1	75.1	41.7	0.0
5.	Դրամավարկային ազատությունը	73.1	76.0	72.9	77.8	84.6	80.3	80.6	82.0	84.5	81.7	91.1	77.8	69.1	55.5	0.0	0.0	0.0
6.	Ներդրումների ազատությունը	75.0	75.0	75.0	70.0	70	60	70	70	70	70	70	70	50	30	30	30	30
7.	Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70.0	70.0	70	70	70	90	90	70	70	70	70	50	50	50	50
8.	Սեփականության իրավունքը	30.0	30.0	30.0	35.0	35	30	50	50	50	50	50	50	50	50	50	50	50
9.	Կոռուպցիայից ազատությունը	26.0	27.0	29.0	30.0	29	29	31	30.0	25.0	25.0	25.0	30	30	30	30	30	50
10.	Աշխատանքի ազատությունը	76.6	75.9	70.6	66.3	68.2	70.3	65.3	62.1	_	_	_	_	_	_	_	_	_
	«Տնտեսական ազատության ինդեքսը»	68.8	69.7	69.2	69.9	69.9	68.6	70.6	69.8	70.3	67.3	68.0	66.4	63.0	56.4	49.6	46.7	42.2

[6] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 1996-2008 թթ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հանգեցնելով նախկին հրապարակումների համեմատ տարբեր տարիներին Հայաստանի դիրքի փոփոխության: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls:

Հարավկովկասյան երկրների «Տնտեսական ազատության ինդեքսը» ըստ «Հերիթիջ» հիմնադրամի գնահատականների (2008-2012 թվականներ) [7]

Աղյուսակ 4

		ՀԱՅԱՍՏԱՆ					ՎՐԱՍՏԱՆ					ԱԴՐԲԵՋԱՆ				
		2012	2011	2010	2009	2008	2012	2011	2010	2009	2008	2012	2011	2010	2009	2008
Երկրների թիվը		**184**	**183**	**183**	**179**	**157**	**184**	**183**	**183**	**179**	**157**	**184**	**183**	**183**	**179**	**157**
Երկրի դիրքը		**39**	**36**	**38**	**31**	**30**	**34**	**29**	**26**	**32**	**32**	**91**	**92**	**96**	**99**	**105**
	ԳՈՐԾՈՆՆԵՐԸ															
1.	Գործարարության ազատությունը	87.8	82.4	83.4	83.7	81.3	86.9	87.3	87.9	86.6	85.0	68.6	72.9	74.6	74.6	62.6
2.	Առևտրի ազատությունը	85.4	85.5	80.5	86.4	85.0	89.2	89.2	89.1	80.6	71.0	77.2	77.1	77.1	78.4	78.4
3.	Հարկաբյուջետային ազատությունը	89.3	89.2	89.3	90.0	89.0	87.8	87.5	89.1	86.8	90.7	84.9	83.9	79.5	79.7	80.4
4.	Կառավարության չափը	74.9	85.7	90.9	89.7	86.4	55.8	60.3	65.3	74.6	81.3	63.7	71.0	77.5	77.5	82.9
5.	Դրամավարկային ազատությունը	73.1	76.0	72.9	77.8	84.6	74.4	76.7	70.2	70.9	71.4	74.5	72.6	62.7	66.3	76.5
6.	Ներդրումների ազատությունը	75.0	75.0	75.0	70.0	70	70.0	70.0	70.0	70.0	70	55.0	55.0	55.0	30.0	30
7.	Ֆինանսական ազատությունը	70.0	70.0	70.0	70.0	70	60.0	60.0	60.0	60.0	60	40.0	40.0	40.	40.0	30
8.	Սեփականության իրավունքը	30.0	30.0	30.0	35.0	35	40.0	40.0	40.0	35.0	35	20.0	20.0	20.0	25.0	30
9.	Կոռուպցիայից ազատությունը	26.0	27.0	29.0	30.0	29	38.0	41.0	39.0	34.0	28	24.0	23.0	19.0	21.0	24
10.	Աշխատանքի ազատությունը	76.6	75.9	70.6	66.3	68.2	92.1	92.1	93.7	99.4	100.0	81.6	81.1	82.5	87.0	58.7
	«Տնտեսական ազատության ինդեքսը»	68.8	69.7	69.2	69.9	69.9	69.4	70.4	70.4	69.8	69.2	58.9	59.7	58.8	58.0	55.3

[7] «Հերիթիջ» հիմնադրամի մեթոդաբանության փոփոխության արդյունքում 2008 թ. «Տնտեսական ազատության ինդեքսի» գնահատականները վերահաշվարկվել են՝ հաշվի առնելով նախկին հրապարակումների համեմատ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքերի փոփոխությունը: Աղբյուրը՝ http://www.heritage.org/index/excel/DownloadRawData.xls: